

ՀԱՆԳԻՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նոր վշտով յայտնում ենք, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Վեհարանում Յունիսի 29ին, Նրեմշաբթի, ժամը 17:50ին, անժամանակ, կեանքի 67րդ տարում ի Տէր հանգաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ:

Ամենայն Հայոց 131րդ Հայրապետը Լուսաւորչի Աթոռին բազմեց 1995թ. Ապրիլի 4ի ազգային-եկեղեցական սրբազուար ժողովի ընտրութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 18ամեայ գահակալի հարուստ փորձառութեամբ: Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառամեայ հովուապետութեան տարիներին իմաստութեամբ ու անսակարկ նուիրումով հովուեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին: Նորին Սրբութիւնը Մայր Հայրենիքի, Արցախի եւ աշխրհսփիւռ մեր ժողովրդի հոգեւոր վերագարթօմէքի, հօգորութեան եւ միասնութեան սրբազան առաքելութեանը ծառայացրեց իր եռամդն ու անխոնջ ջանքերը, խօսքն ու գործը:

«Հարկ ի վերայ մեր կայ» պարտքի զգացումով իր հայեացքը յառած քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700ամեայ դարակազմիկ յոբելեանին, Հայոց Հայրապետն արդիւնաւորեց հովուապետութեան կարճատեւ իր շրջանի իւրաքանչիւր օրն ու ժամը: Վերակազմուեցին Հայ Եկեղեցու Թեմերը Հայաստանում եւ ԱՊՀ երկրներում: Ընդարձակուեց եկեղեցաշինութիւնը՝ վերահորդուեցին եւ բարեգարդուեցին խոհարհուած եկեղեցիներ ու վանքեր, կառուցուեցին մոլորքը: Գեղոգեան Ճեմարանի մոլորգեալ յարկից մերս հասունացաւ

հոգեւոր սպասաւորների մեր սերունդ: Աշխուժացաւ եւ ընդարձակուեց Քրիստոնէական Դաստիարակութեան ու Քարոզչութեան Կենտրոնի գործունէութիւնը: Գործել սկսեց Օշականի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» մորաբաց դպրատունը: Արգասաբեր եղաւ Մայր Աթոռի հրատարակչական գործունէութիւնը՝ հրատարակութեամբ աստուածաբանական եւ հայագիտական աշխատութիւնների, որոնց շարքում՝ Վեհափառ հայրապետի մեծաթիւ գրքեր ու գրութեմբ: 1700 ամեակի շրջագծում Մոսկուայի Կրեմլում, Վատիկանում եւ աշխարհի այլ քաղաքներում բացուեցին եկեղեցական արուեստի ցուցահանդէսներ, կազմակերպուեցին գիտաժողովներ եւ ուխտագնացութիւններ՝ դէպի հայրենի սրբավայրեր: Կեանքի կոչուեցին սոցիալական զարգացման ծրագրեր՝ ուղղուած տնտեսական դժուարութիւնների յաղթահարմանը Հայաստանում եւ Արցախում: Իր բարձր հեղինակութեամբ Վեհափառ Հայրապետն առաւել ամրապնդեց Եկումէնիկ կապերը Բոյր եկեղեցիների հետ, հովուապետական յանձնարարիկ յայեցութիւններով միութեանց եւ օրհնութիւն բաշխեց հաւատաւոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ սփիւռս: Նորին Սրբութիւնը ՀՀ Գիտութիւնների Ազգային ակադեմիայի պատուաւոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպէս խոշոր մտաւորական արժանացել է աշխարհի մի շարք ակադեմիաների եւ համալսարանների պատուաւոր դոկտորի կոչմանը:

Մայր Աթոռի սգաւոր միաբանութիւնը՝ Սուրբ Հոգու միութեարութիւնն է հայցում համայն հայրութեանը, խորագգաց հաւատաւոր մեր ժողովրդի եւ Հայրենի պետութեան առ Վեհափառ Հայրապետը ցուցաբերած որդիական սիրոյ եւ

սրտակցութեամբ դրսևորումից, Մայր Աթոռ Սիւրբազմութիւնը եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յայտարարում են քառասունհինգ տարեկան:

Աղօթք, խումկ եւ բիւր օրհնութիւն Վեհափառ Հայրապետի անմեռ յիշատակին: Թող Բարին Աստուած Իր Փառաց Պսակին արժանացնի եւ երկնային երանաւտ

խաղաղութեամբ մէջ ընդունի սիրեցեալ Հայրապետի լոյս հոգին՝ ընդ դասս աստուածագգեաց Հայոց երանեալ հայրապետաց:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՍ
ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱՄՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (աւագանի անուամբ Նշան Սարգսեան) ծնունդ է 1932 թ. Օգոստոս 27ին Քեսապում (Սիրիա): Նախնական կրթութիւնը ստացել է հայրենի գիւղի Ուսումնասիրաց միացեալ վարժարանում, որից յետոյ ուսումնառութիւնը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքում (1946թ.): Այստեղ էլ, 1949թ. Մայիսի 29ին ձեռնադրուել է սարկաւագ: 1952թ. աւարտել է ուսումնառութիւնը Դպրեվանքի Ընծայարանի բաժնում:

1952թ. Սեպտեմբերի 28ին, ձեռնադրուելով կուսակոմ քահանայ, ի յիշատակ նորոգ վախճանեալ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն), վերակոչւում է Գարեգին արեղայ եղաւում Կիլիկիոյ Միաբանութեամբ ուխտի անդամ: Պաշտպանելով վարդապետական աւարտաճառը՝ «Հայաստանեայց եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Տարականնորում» քեմայով, 1955թ. Յունիսի 5ին ստանում է վարդապետական աստիճան: Նոյն թուականին պաշտօնավարում է Դպրեվանքում որպէս ուսուցիչ եւ վերակացու: Որոշ ժամանակ անց (1956թ.)

ստանձնում է Դպրեվանքի տեսուչի պաշտօնը:

1957-1959թթ. Գարեգին վարդապետն ուսումնառութիւնը շարունակում է Օսթորդի համալսարանում, որտեղ հետեւում է աստուածաբանական բարձրագոյն ուսման եւ ստանում է գրականութեան բակաւորիայի աստիճան՝ որպէս աւարտաճառ ներկայացնելով «Քաղկեդոնի ժողովը եւ Հայ եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրութիւնը (1965թ. հրատարակուել է Լոնդոնի S.P.C.K. հրատարակչատան կողմից, վերահրատարակուել է Նիւ Եորքում, 1976թ.):

1960թ. Օսթորդը աւարտելուց վարդապետը գործում մասնակցութիւն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ: Խորէն Ա. Կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ (1963թ. Մայիսի 5) Գարեգին վարդապետը կարեւոր դեր է կատարում նորընտիր կաթողիկոսի պաշտօնական այցելութիւններին կազմակերպման գործում: Միաժամանակ մասնակցում է ԵՃԽ միջեկեղեցական կարեւոր համաժողովների:

Դիտորդի կարգավիճակով